

# ՆԵՐԳԱՂԹԵԼ

## ՈՒԶՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ



Սուրիոյ և Լիբանանի հայերու ներգաղթի կօմիտէն հետեւեալ պաշտօնական զեկոյցը հրատարակած է. —

Կօմիտէս, երրորդ կարաւանի մեկնումէն յետոյ, ներգաղթելու համար արձանագրուած մեր հայրենակիցներուն լուրջ ուշադրութեան կը յանձնէ հետեւեալ կէտերը.

1. — Նկատի առնելով որ այս տարի ներգաղթողներուն թիւը սահմանափակ է և հետեւաբար կարելիութիւն չկայ բոլոր փափաքողները Հայրենիք ուղարկելու, կօմիտէս կը յայտարարէ թէ բոլոր անոնք որ անմիջական անհրաժեշտութեան տակ չեն գտնուիր, պէտք չէ ներգաղթելու փութկոտութիւնցոյց տան: Առ այդ, կօմիտէս կը թելադրէ.

Ա. — Անոնք որ ներկայիս գործունին կամ կրնան ճարել, պէտք է շարունակեն իրենց աշխատանքները:

Բ. — Տուն ունեցողներ կրնան իրենց տուները ծախել միայն այն պարագային երբ մեկնելու արտօնութիւն տրուած է իրենց: Հակառակ պարագային, կօմիտէս ռեէ պատասխանատուութիւն չստանձնել:

2. — Անգամ մը եւս կը յայտարարենք թէ, ըլլայ կօմիտէիս Գրասենեակին առջեւ, ըլլայ կօմիտէիս անդամներուն տուները եղած դիմումներն ու խճողումները բացարձակապէս ապարդիւն են: Ներգաղթողներու ընտրութիւնը պիտի կատարուի թաղերու մէջ:

3. — Ներգաղթող իւրաքանչիւր ընտանիք պէտք է գիտնայ թէ պարտաւոր է վճարել իր ճանապարհածախսը:

4. — Բոլոր այն ներգաղթողները որոնք պարտք, ընտանեկան վէճեր կամ դատական խնդիրներ ունին, պէտք է մեկնումի վիզատանալէ առաջ, բոլոր այս առկախ հարցերը կարգադրած ըլլան, օրէնքին տրամադրութեանց համաձայն: Հակառակ պարագային, ենթակաները վերջին պահուն կըրնան վիզայի իրաւունքէն զրկուիլ:

5. — Բոլոր անոնք որ ներգաղթի արձանագրութեանց օրերէն ասդին իրենց ընտանեկան կազմին մէջ փոփոխութիւններ ունեցած են—ամուսնութիւն, ծնունդ, մահ եւայլն—պէտք է դիմեն ներգաղթի գրասենեակ, անհրաժեշտ գործողութիւնները կատարել տալու համար:

6. — Բոլոր անոնք որ Պատուիրակներուն կը ներկայանան, պէտք չէ այն կարծիքը ունենան թէ անպայման կրնան անմիջապէս ներգաղթել: